ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 օգոստոսի 2014 թվականի N 941 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 6-Ի N 149-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի փետրվարի 6-ի «Հայաստանի Հանրապետությունում 2014 թվականի գարնանացանի համար գարու, եգիպտացորենի, առվույտի և կորնգանի արտադրության զարգացման ծրագիրը հաստատելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի դեկտեմբերի 19-ի N 1414-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու, Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությանը գումար հատկացնելու և գնման գործընթացը կազմակերպելու մասին» N 149-Ն որոշման N 1 հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

1) 15-րդ և 16-րդ կետերում «1978,7» թիվը փոխարինել «1906,3» թվով, իսկ «189,96» թիվը՝ «169,96» թվով.

2) 19-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«19. Հայաստանի Հանրապետության մարզերի համար նախատեսված գարնանացան գարու, եգիպտացորենի, առվույտի և կորնգանի սերմացուների քանակությունները ներկայացված են N 1 աղյուսակում.

Աղյուսակ N 1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐԶԵՐԻՆ ԳԱՐՆԱՆԱՑԱՆ ԳԱՐՈՒ, ԵԳԻՊՏԱՑՈՐԵՆԻ, ԱՌՎՈՒՅՏԻ ԵՎ ԿՈՐՆԳԱՆԻ ՍԵՐՄԱՑՈՒՆԵՐԻ ԲԱՇԽՈՒՄԸ

NN ը/կ	Անվանումը	Հատկացվող սերմացուի քանակը (տոննա)			
		գարնանացան գարու սերմացու	եգիպտացորենի սերմացու	առվույտի սերմացու	կորնգանի սերմացու
1.	Արագածոտն	350	0	32	66.5
2.	Արարատ	33.85	3.5	16.08	0
3.	Արմավիր	23.0	0.6	6.916	0
4.	Գեղարքունիք	515.95	0	33.724	43.76
5.	Լոռի	100	4.16	11.5	13.5
6.	Կոտայք	77.65	0	2	0.5
7.	Շիրակ	632.7	13.25	57.03	45.7
8.	Սյունիք	200.0	0.9	6	0
9.	Վայոց ձոր	65.5	0.03	1.1	0
10.	Տավուշ	50.0	1	2	0
11.	«Սերմերի գործակալություն» ՊՈԱԿ	7.65	0	0	0
Ընդամենը		2056.3	23.44	168.35	169.96

».

3) 26-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«26. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության մարզերի համար նախատեսված, սակայն հողօգտագործողների կողմից վճարունակ պահանջարկի բացակայության պատճառով չիրացված գարնանացան գարու, եգիպտացորենի, առվույտի ու կորնգանի սերմացուները (այսուհետ՝ չիրացված սերմացուներ) 2014 թվականի աշնանն անվճար հատկացվում են հողօգտագործողներին:».

4) հավելվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 26.1-ին և 26.2-րդ կետերով.

«26.1. Չիրացված սերմացուները 2014 թվականին հողօգտագործողներին անվճար հատկացնելու և համայնքների ղեկավարների միջոցով հողօգտագործողներին բաշխելու հետ կապված աշխատանքների իրականացման և, ըստ Հայաստանի Հանրապետության գյուղա-

տնտեսության նախարարության հարցման, համապատասխան տեղեկատվության տրամադրման համար պատասխանատու են Հայաստանի Հանրապետության մարզպետները:

26.2. Սահմանել, որ չիրացված սերմացուները՝ համաձայն N 2 աղյուսակի, հատկացվում են Հայաստանի Հանրապետության մարզպետարաններին՝ համապատասխան մարզպետների և Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության «Սերմերի գործակալություն» պետական ոչ առևտրային կազմակերպության միջև կնքված պայմանագրի հիման վրա:

Աղյուսակ N 2

ՎՃԱՐՈՒՆԱԿ ՊԱՀԱՆՋԱՐԿԻ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՏՃԱՌՈՎ ՉԻՐԱՑՎԱԾ ԳԱՐՆԱՆԱՑԱՆ ԳԱՐՈՒ, ԵԳԻՊՏԱՑՈՐԵՆԻ, ԱՌՎՈՒՅՏԻ ԵՎ ԿՈՐՆԳԱՆԻ ՍԵՐՄԱՑՈՒՆԵՐԻ ԲԱՇԽՈՒՄԸ

NN ը/կ	Մարզի անվանումը	Չիրացված սերմացուի քանակը (տոննա)			
		գարնանացան գարու սերմացու	եգիպտացորենի սերմացու	առվույտի սերմացու	կորնգանի սերմացու
1.	Արագածոտն	305.3	0	25.22	6.455
2.	Արարատ	3.85	3.0	12.18	0
3.	Արմավիր	0	0.35	0	0
4.	Գեղարքունիք	225.25	0	30.794	34.082
5.	Լոռի	54.7	1.66	6.324	3.973
6.	Կոտայք	8.773	0	0.696	0
7.	Շիրակ	569.822	12.255	49.807	0
8.	Սյունիք	0	0.7	0	0
9.	Վայոց ձոր	37	0.03	0.63	0
10.	Տավուշ	34.42	0.825	1.232	0
Ընդամենը		1239.115	18.82	126.883	44.51

»:

2. Թույլատրել «Սերմերի գործակալություն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը Հայաստանի Հանրապետության մարզերում չիրացված գարնանացան գարու, եգիպտացորենի, առվույտի ու կորնգանի սերմացուները Հայաստանի Հանրապետության մարզկենտրոններ տեղափոխելու, բարձելու և բեռնաթափելու հետ կապված աշխատանքները կազմակերպելու նպատակով օգտագործել մինչև 13000000.0 դրամ՝ ծրագրի իրականացման արդյունքում տնտեսված 36297800.0 դրամից:

3. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության մարզերում չիրացված գարնանացան գարու, եգիպտացորենի, առվույտի ու կորնգանի սերմացուները Հայաստանի

Հանրապետության մարզեր տեղափոխելու, բարձելու և բեռնաթափելու հետ կապված աշխատանքների ավարտից հետո տնտեսված գումարը մինչև 2014 թվականի դեկտեմբերի 20-ը ենթակա է վերադարձման՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջե։

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Հ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

2014 թ. սեպտեմբերի 11
Երևան